ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով եւ Ազգային ժողովի աշխատակարգի 87-րդ կետով, հանձնաժողովը որոշում է.

1. 2023 թվականի մայիսի 10-ին, ժամը 11:00-16:00-ն Ազգային ժողովի նիստերի դահլիճում հրավիրել խորհրդարանական լսումներ «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

2. Հաստատել խորհրդարանական լսումների ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆ**

25 ապրիլի 2023 թվականի,
քաղ. Երեւան
ԱՍՀ-005 -Լ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հաստատված է

Ազգային ժողովի աշխատանքի և

սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի

25.04.2023թ. ԱՍՀ- 005-Լ որոշմամբ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ

10-ը մայիսի 2023թ.

Ազգային ժողովի նիստերի դահլիճ

10:00-11:00	Մասնակիցների գրանցում
11:00-11:20	Բացման խոսք **Հերիքնազ Տիգրանյան** *Աժ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ*
11:20-12:00	«Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի հիմնական բովանդակությունը **Զեկուցող Ռուբեն Սարգսյան** *ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարար տեղակալ*
12:00-13:30	Հարց ու պատասխան *Հարցի և պատասխանի տևողությունը՝ մինչև 2-ական րոպե* *Արձագանքի համար՝ մինչև 1-ական րոպե*
13:30-14:00	ԸՆԴՄԻՋՈՒՄ
14:00-15:30	Մասնակիցների ելույթներ *Ելույթի տևողությունը մինչև 10 րոպե*
15:30-15:50	Զեկուցողի եզրափակիչ ելույթ
15:50-16:00	Ամփոփում